ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 14-ից 15-ը Իրանի Իսլամական Հանրապետություն (մայրաքաղաք Թեհրան) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Իրանի Իսլամական Հանրապետություն, Ք. Թեհրան, 2024 թվականի փետրվարի 14-ից փետրվարի 15-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ԻԻՀ Ծրագրավորման և բյուջետային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստին:

6. **Քննարկված թեմաները.**

   Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստին քննարկվել են հայ-իրանական փոխըմբռնման հուշագրի բաժնում գտնվող ճանապարհաշինության ոլորտին վերաբորող օրակարգային հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Հանդիպում է տեղի ունեցել ԻԻՀ ճանապարհաշինության և քաղաքաշինության նախարարի տեղակալ Խեյրոլլահ Խադեմիի հետ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի մեր գործընկերների մասնակցությամբ: Հանդիպման շրջանակներում քննարկվել են Հայաստանն Իրանի սահմանին կապող՝ Մեղրի անցակետի նոր կամուրջի կառուցման թողունակության իրականացման հնարավորության հարցը:

Անդրադարձ է կատարվել նաև հյուսիս-հարավ ճանապարհահատվածի տրանշ 4 Քաջարան-Ագարակ հատվածի կառուցման 32կմ ճանապարհահատվածի շինարարության աշխատանքներում իրանական ընկերությունների ներգրավվածությունը և կողմերը երկուստեք ընդգծել են Հայաստան և Իրան հարաբերությունների բարձր մակարդակը՝ հայտնելով իրենց աջակցությունը ծրագրի՝ սահմանված ժամկետներում իրականացման հնարավորությունը:

Քննարկվել է Նովրուզ- Թավրիզ ճանապարհահատվածի կառուցման հարցը, որտեղ կողմերը որոշել են հետևել աշխատանքների հետագա ընթացքին և հանդես եկել փորձի փոխանակմամբ ու տեղեկատվության տրամադրման շարունակականության ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ավարտին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որում արձանագրվել են Հայաստանի և Իրանի միջև համագործակցության փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ուղղություններում հարաբերությունների զարգացմանը միտված պայմանավորվածություններ՝ այդ թվում ճանապարհաշինության ոլորտում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքով՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստին պայմանավորվածություն ձեռք բերվեց ընթացիկ ծրագրերի առաջընթացն ապահովելու նպատակով քննարկվող հարցերի շուրջ աշխատանքային հանդիպումների կազմակերպման ժամկետների և իրականացման ֆորմատի վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

20.02.2024թ.